

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հեղինակ՝ Մհեր Սուրենի Քումունց

**Ատենախոսության վերնագիր՝ «Արցախ - Սյունիքի բարբառային
բառապաշարը»**

Հայցվող գիտական աստիճան՝ Բանասիրական գիտությունների դոկտոր

Մասնագիտություն՝ Ժ.02.01 – Լեզվաբանություն

«Արցախ - Սյունիքի բարբառային բառապաշարը» վերաառությամբ
ատենախոսությունը նվիրված է հայերենի ծայրիյուսիսարևելյան
միջբարբառախմբին պատկանող Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի
պատմական շերտերի համակարգային և ծագումնաբանական քննությանը:
Աշխատանքը, որն իրականացվել է պատմական բառագիտության,
բարբառագիտության և պատմահամեմատական լեզվաբանության առանցքային
սկզբունքներով, հայերենագիտության համար ունի բացառիկ արդիականություն և
գիտական նշանակություն:

Սյունիք-Արցախի բարբառային տարածքը, իր պատմաշխարհագրական
մեկուսացվածության շնորհիվ, դարեր շարունակ եղել է հայերենի հնագույն
բառաշերտերի պահպանման կարևորագույն «լեզվական ամրոց», ինչպես նշվում է
ատենախոսության Ներածություն բաժնում: Բարբառային բառապաշարի
համակարգային վերլուծությունը թույլ է տալիս նոր լույս սփռել հայերենի՝ ինչպես
նախահայերենյան (հնդեվրոպական), այնպես էլ գրաբարյան շրջանի բառաֆոնդի
զարգացման վրա՝ լրացնելով գիտական գրականության մեջ առկա բացերը: Այս
առիթով ատենախոսը իրավացիորեն նկատում է, որ. «Հայերենի բարբառները
հիմնականում ուսումնասիրվել են հնչյունաբանական և ձևաբանական
տեսանկյուններից, մինչդեռ բառապաշարի համակարգային վերլուծությունը
մնացել է հետին պլանում: Սույն աշխատանքով փորձ է արվում լրացնելու այդ բացը՝

առաջարկելով Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարի՝ պատմական շրջանի շերտերի համալիր քննություն»:

Ատենախոսության մեջ կիրառվող բառապաշարի թեմատիկ-իմաստային դասակարգման մոտեցումը, որը հենվում է Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի ուրվագծած սկզբունքների վրա, թույլ է տալիս ոչ միայն արձանագրել և գիտական քննության ենթարկել բարբառային բառերը, այլև դրանք քննել պատմական և մշակութային համատեքստում՝ բացահայտելով հայեցակարգերի զարգացումը տվյալ բարբառային միջավայրում:

Աշխատանքը գիտական շրջանառության մեջ է դնում հսկայական ծավալի նոր բարբառային նյութ, որը մինչ այս չի եղել համակարգային ուսումնասիրության առարկա: Այս նյութը կենսականորեն կարևոր է հետագա բառարանագրական և ստուգաբանական հետազոտությունների համար:

Աշխատանքի արդիականությունը մեծ է նաև հանրալեզվաբանական տեսանկյունից: Հաշվի առնելով 2023 թվականի աշխարհաքաղաքական զարգացումները և Արցախի բնակչության բռնի տեղահանումը, տվյալ միջբարբառախմբի բառապաշարը, որը գոյություն ունի գրեթե բացառապես բանավոր խոսքում, կանգնած է անվերադարձ կորստի վտանգի առջև: Ատենախոսությունը, հետևաբար, կատարում է ոչ միայն գիտական վերլուծության, այլև ազգային-մշակութային ժառանգության հրատապ փաստագրման և ամրագրման առաքելություն:

Ատենախոսությունը կառուցվածքային առումով լիովին համապատասխանում է դոկտորական աշխատանքին ներկայացվող պահանջներին: Ներածության մեջ հստակ ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները (համակարգել, վերլուծել, համեմատել, առաջարկել նոր վարկածներ), որոնք հետևողականորեն լուծվում են հիմնական երկու գլուխներում: Առաջին գլխում նախահայերենյան շերտի քննությունը 23 թեմատիկ ենթախմբերով (Աղյուսակ 24) ցուցադրում է նյութի համապարփակ ընդգրկումը և վերլուծական

խորությունը:

Ատենախոսության մեջ կիրառված մեթոդաբանությունը և ստացված գիտական նորույթը արժանի են առանձնահատուկ բարձր գնահատականի:

Հեղինակն իրավացիորեն հիմնվում է պատմահամեմատական լեզվաբանության դասական դրույթների վրա՝ կիրառելով եռեզր համեմատության սկզբունքը. բարբառային տվյալ ↔ հին հայերեն (գրաբար) ↔ հնդեվրոպական նախալեզու: Այս մոտեցումը թույլ է տալիս ճշգրտորեն տարբերակել բնիկ և փոխառյալ շերտերը, ինչպես նաև վերականգնել հայերենի զարգացման միջանկյալ, չգրավորված ձևերը:

Բառապաշարի թեմատիկ-իմաստային դասակարգումը, որը հետևում է Կ. Բաքի (հնդեվրոպական) և Գ. Ջահուկյանի (հայերեն) մեթոդաբանական մոտեցումներին, ցույց է տալիս հայցորդի խորը տեսական պատրաստվածությունը: Այս մեթոդը հատկապես արդյունավետ է նախահայերենյան շերտի վերլուծության համար, քանի որ բացահայտում է հայեցակարգային ընդհանրությունները և բառիմաստային զարգացման օրինաչափությունները ոչ միայն բարբառային բառապաշարում, այլ նաև հայերենի համակարգում:

Աշխատանքում ներկայացված վիճակագրական տախտակները (Աղյուսակ 24 և այլն) և գծապատկերները, որոնք քանակապես չափում են բառաշերտերի պահպանվածության աստիճանը, բարձրացնում են աշխատանքի վերլուծական խստությունն ու ապահովում տրամաբանական հիմնավորումները:

Հիմնվելով հեղինակի կողմից առաջադրված դրույթների և ներկայացված նյութի վրա՝ ատենախոսության հիմնական գիտական նորույթը հետևյալն է. 1. Առաջին անգամ է, որ Սյունիք-Արցախի բարբառախմբի պատմական բառապաշարի նախահայերենյան շերտը ենթարկվում է նման ընդգրկուն և թեմատիկ համակարգված քննության, որի արդյունքում քանակապես հաստատվում է այս բարբառի կարևորագույն դերը հայերենի բառաֆոնդի հնագույն մասի պահպանման գործում:

Հեղինակը ներկայացնում է մի շարք բառերի (օր.՝ *սջրդ, ածիկ, կածան, լանփա, սարասրնգի, սունդու*) ծագումնաբանության նոր մոտեցումներ՝ հիմնավորելով դրանց բնիկ հայկական, հնդեվրոպական ծագումը կամ վերանայելով նախկինում ընդունված փոխառյալ լինելու տեսակետները:

Աշխատանքը փաստում է, որ հայերենի բառային արխաիզմների 81%-ից ավելին վկայվում է Սյունիք-Արցախի բառապաշարում, ինչը եզակի երևույթ է հայ բարբառագիտության մեջ և ցուցադրում է տարածքի լեզվական շարունակականության խորքը:

Ատենախոսությունը զգալի ներդրում է հայոց լեզվաբանության մեջ՝ հարստացնելով հայ պատմական բառագիտության և ստուգաբանության տեսական պատկերացումները:

Ատենախոսության արդյունքները հիմք են ծառայում հայերենի բառապաշարի պատմական շերտավորման և բառերի ձևային և իմաստային զարգացման օրինաչափությունների ճշգրտման համար՝ հատկապես գրաբարբառ հարաբերությունների համատեքստում:

Ատենախոսության նյութը անմիջականորեն կիրառելի է բառարանագրական աշխատանքներում (հատկապես բարբառային բառարանների և ստուգաբանական հավելվածների ստեղծման գործում): Այն ունի նաև անգնահատելի մշակութային արժեք՝ որպես հայոց լեզվական ժառանգության կարևորագույն մասի համակարգված փաստագրում:

Հայցորդի կողմից պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները բխում են ատենախոսության մեջ կատարված համակարգային վերլուծությունից և ամփոփված են Եզրակացության 1.2. կետում՝ որպես ստուգաբանական նոր մոտեցումներ. «Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի ուսումնասիրության թեմատիկ-համադրական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել վերանայելու նախահայերենյան բառաֆոնդի որակական և քանակական պատկերը: Բարբառային տվյալները վճռորոշ

նշանակություն ունեն արխայիկ մի շարք բառային միավորների ստուգաբանական վիճելի հարցերի լուծման համար՝ հիմնավորելով դրանց հնդեվրոպական ծագումը կամ վերանայելով նախկինում ընդունված տեսակետները»: Դրանք վկայում են հեղինակի ինքնուրույն մտածողության, պատմահամեմատական մեթոդի խորքային տիրապետման և հայերենի բառապաշարի ստուգաբանական հարցերը բարբառային նյութով ճշգրտելու կարողության մասին:

Մեր կարծիքով՝ ատենախոսության կարևոր ձեռքբերումներից են մի շարք բառերի՝ առաջին անգամ կատարված ստուգաբանական փորձերը, ինչպես, օրինակ՝ «աջըղ» («ոխ, վրեժ, զայրույթ») բառի խորքային վերլուծությունը: Հայցորդը փորձում է հերքել բառի թյուրբական փոխառյալ լինելու ընդունված տեսակետը՝ հիմնավորելով դրա կապը բնիկ հայերենի «ջիղ» արմատի հետ: Այս մոտեցումը հիմնվում է ինչպես իմաստային զարգացման (ջիղ → ջգածգվել → ջղային-ջղայնանալ → «զայրույթ, ոխ»), այնպես էլ բարբառախմբին բնորոշ հնչյունական տեղաշարժերի վրա (ջիղ > ջըղ > աջըղ):

Այս և նման ստուգաբանական փորձեր հույժ կարևոր է հայերենագիտության համար, քանի որ վերականգնվում և հաստատվում են մի շարք բառերի բնիկ ծագումը, որոնք ավանդաբար սխալմամբ դիտարկվել են որպես օտար փոխառություններ: Այն ցուցադրում է, թե ինչպես են բարբառային ձևերն ու կապակցությունները (օրինակ՝ *բջրղվել*, *բջրղօթուն*) պահպանել հնագույն իմաստային կապերը:

Հեղինակը հաջողությամբ վերլուծում է Սյունիք-Արցախին բնորոշ արխաիկ անունները, որոնք հաճախ մնացել են անմեկնելի կամ ոչ լիարժեք քննված:

«Կածան» բառի վերլուծությունը հիմնավորվում է հնդեվրոպական *gwāg՝- («ուղի, ճանապարհ») արմատի հետ նրա կապով՝ ցույց տալով, որ այս բառը ոչ միայն պահպանել է հին իմաստը, այլև հարստացել է տեղական կենսակերպին բնորոշ բազմաթիվ ածանցյալներով (*մրրթըկածան*, *քոռ կա/է/ծան*):

«Սունդու» («անցք, ուղի, խողովակաձև անցք») բառի վերլուծությունը,

զուգահեռվելով հնդեվրոպական *sent- («ուղղվել, գնալ, ընթացք») արմատին և հնագույն ծիսական պատկերացումներին (*Մունդուկուկու*), ներկայացնում է եզակի լեզվամշակութային ներդրում՝ բացահայտելով բառի հնագույն, նախաքրիստոնեական արմատները:

Հեղինակը ճշգրտում է նաև հիմնական կենցաղային տերմինների ծագումը՝ ամրապնդելով բարբառի բնիկ շերտը:

Ուշագրավ են մի քանի բառերի ստուգաբանական փորձերը, ինչպես՝

- «Ածիկ» բառի կապը հնդեվրոպական *ad-es- («հացահատիկ») արմատի հետ, հիմնվելով բարբառային տարբերակի վրա, վերահաստատում է նրա հնագույն ծագումը՝ հերքելով այլ աղերսները:

- «Խօրխ» («մաշկ») բառի միջոցով հնդեվրոպական *(s)ker- («մաշկ») արմատի իմաստի առկայության հիմնավորումը կարևոր է մարմնի մասերին վերաբերող բառապաշարի պատմական վերականգնման համար:

«Լամփա» («փոքր գերան») և «սարասընգի» («ճոճանակ») բառերի համար առաջարկվող հնդեվրոպական վարկածները (համապատասխանաբար *leubh- «կեղևահան անել» և *syeng(k)- «ճոճել, ոլորել») ցույց են տալիս, որ Սյունիք-Արցախի բնիկ տերմինաբանությունը կարող է պարունակել հիմնարար ծագումնաբանական տվյալներ:

Ատենախոսությունը բովանդակային առումով ներկայացնում է հանգամանալից վերլուծություն՝ համապատասխանելով Գիտական բարձրագույն որակավորման կոմիտեի պահանջներին:

Առաջին գլուխը, որը ներկայացված է 23 թեմատիկ ենթախմբերով, սույն աշխատանքի առանցքն է: Հեղինակը ցուցադրում է յուրաքանչյուր ենթախմբում բառերի պահպանվածության բարձր աստիճանը, մասնավորապես՝ «Մարմնի մասեր», «Երկրագործություն» և «Ֆիզիկական աշխարհ» խմբերում:

Այն, որ հեղինակը ներկայացնում է հնդեվրոպական նախահիմքերը (ըստ Կ. Բաքի) և հայերենի ընդհանուր տվյալները (ըստ Գ. Ջահուկյանի)՝ զուգադրելով

Սյունիք-Արցախի բարբառային ձևերին, ապահովում է վերլուծության թափանցիկությունը և թույլ է տալիս ցուցադրել բարբառային նյութի անգնահատելի ներդրումը հայոց լեզվի պատմության մեջ:

Գնահատելի է ոչ միայն բառերի ձևի, այլև նրանց իմաստային նրբերանգների քննությունը, որոնք բացահայտում են տեղական աշխարհընկալման և ապրելակերպի յուրահատկությունները:

Երկրորդ գլուխը հաջողությամբ կապում է նախահայերենյան ժառանգությունը գրաբարյան զարգացումներին և զբաղվում է փոխառյալ բառապաշարի ծագումնաբանական դասակարգմամբ:

Ատենախոսության հեղինակը ճիշտ է կատարում գրաբարից անցած բառերի գուգադրումը՝ առանձնացնելով այն դեպքերը, երբ բարբառը պահպանել է գրաբարյան ձևը կամ դրանից ածանցել է նոր կառույցներ (*մարթ*՝ «ամուսին» իմաստի զարգացումը, *կրնեգ*՝ կենցաղային գործառույթը):

Կատարվել է փոխառյալ շերտերի (իրանական, սեմական, կովկասյան, հունական) մանրակրկիտ ծագումնաբանական դասակարգում, որը հիմնավորում է ատենախոսության եզրակացության 2.5 կետում բերված քանակական տվյալները (Իրանական տարրի գերակշռությունը): Հատկապես արժեքավոր են այն դիտարկումները, որոնք տարբերակում են հին (գրաբարյան) և նոր (բարբառային) փոխառությունները՝ հիմնվելով հնչյունական փոփոխությունների օրինաչափությունների վրա:

Ատենախոսությունը, բացի վերոհիշյալ դրույթներից, ունի մի շարք անվիճելի առավելություններ, որոնք հիմնավորում են հայցորդի կողմից դոկտորական գիտական աստիճանի հայցումը:

Ատենախոսությունը ներկայացնում է բարբառային բառապաշարի ծագումնաբանական և իմաստաբանական համակարգված պատկերը՝ ապահովելով նյութի լիարժեք ընդգրկումը: Բառերը քննվում են ոչ թե ցրված, այլ խիստ թեմատիկ դասակարգմամբ, ինչը բացահայտում է տվյալ բարբառախմբի

աշխարհընկալման և կենսագործունեության առանձնահատկությունները: Վիճակագրական աղյուսակները (հատկապես Եզրակացության 24-րդ աղյուսակը) ցույց են տալիս հայցորդի կողմից կատարված երկարաժամկետ, անչափ ուշադրություն զբաղեցնող և ծանր աշխատանքը: Ահռելի նյութ է հավաքված այս ատենախոսության մեջ, որը երբեմն խանգարում է. ամեն էջ կարդալուց հետո այնքան տեղեկություն է հավաքվում, որ բավական ժամանակ է պետք, որպեսզի այդ ամենը վերլուծվի և «մարսվի»: Նախահայերենի շերտի, արխայիկ միավորների և վիճահարույց բառերի քանակական գնահատումը ակադեմիական նորույթ է և ամուր հիմք է տալիս հեղինակի եզրակացություններին: Ատենախոսության մեջ ակտիվորեն ներգրավված են ինչպես հին, այնպես էլ նորագույն բառարանագրական տվյալներ, մասնավորապես՝ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի» և հնդեվրոպական լեզուներին վերաբերող արդի ստուգաբանական բառարանների տվյալները, ինչը վկայում է ուսումնասիրության արդիականության և գիտական հենքի ամրության մասին:

Բառաքնական վերլուծությունները չեն սահմանափակվում միայն իմաստով. հեղինակը մանրամասնորեն վերլուծում է հնչյունական տեղաշարժերը (օրինակ՝ $u >$, $p > u$, $g > n$, $r /$ *հերթագայություններ*), որոնք բնորոշ են Սյունիք-Արցախի բարբառներին՝ դրանով իսկ հիմնավորելով բառերի պատմական ճանապարհը:

Ատենախոսության եզրակացությունները հիմնավորված են կատարված բազմակողմանի և մեթոդաբանորեն խիստ վերլուծությամբ: Հեղինակը ոչ միայն ամփոփում է ուսումնասիրության արդյունքները, այլև դրանք վերածում է լեզվաբանական կարևորագույն դրույթների, որոնք զգալի ներդրում են հայագիտության մեջ: Ատենախոսության առանցքային նվաճումներից է Սյունիք-Արցախի բարբառախմբի եզակի պահպանողականության փաստարկումը, որն արտահայտված է հստակ քանակական ցուցանիշներով (Եզրակացության 1.3 և 1.4 կետեր):

«Ընդհանուր հայերենի համար արձանագրված հնդեվրոպական ծագման 2085 բառային միավորի դիմաց Սյունիք-Արցախի բարբառային տարածքում վկայվում է 1317-ը» (մոտ 63%):

Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ բարբառը հայերենի բառային ֆոնդի պատմական խորքը ճշգրտող և պահպանող կարևորագույն աղբյուր է: Այն առավելապես ամրապնդվում է արխայիկ շերտի վերլուծությամբ. *«Ընդհանուր հայերենի բարբառներում վկայված 158 արխայիկ միավորներից 127-ը գործածական է Սյունիք-Արցախի բարբառներում... այսինքն՝ 81%-ից ավելին»:*

Եզրակացության 2.4 կետում ներկայացված խոսքիմասային վերլուծությունը (գոյականներ՝ 77.7%, բայեր՝ 17.5%) տալիս է ամուր լեզվատիպաբանական հիմնավորում՝ եզրակացնելով, որ Սյունիք-Արցախի բարբառը հիմնականում ժառանգել և պահպանել է անվանական-առարկայական բառապաշարը, ինչը տիպական է հնագույն լեզվական համակարգերին:

Եզրակացության 2.6 կետում ամփոփված դրույթը, ըստ որի՝ Սյունիք-Արցախի բարբառախմբի լեզվական հիմքերը դրվել են հայերենի ձևավորման նախագրային ժամանակաշրջանում, ատենախոսության գիտական, մեր կարծիքով՝ ամենակարևոր դրույթն է: Այս եզրահանգումը բխում է մի քանի անկախ տվյալների համադրումից՝ հնդեվրոպական բառերի բարձր տոկոսայնություն, արխայիկ ձևերի գերակշռություն և փոխառյալ շերտերի (իրանական 19.8%, սեմական 3.6% և այլն) համեմատական վերլուծություն:

Այս փաստարկները, որոնք հիմնված են 23 թեմատիկ խմբերի մանրակրկիտ համադրության վրա, գիտականորեն հիմնավորում են ատենախոսության մեջ շոշափվող լեզվական շարունակականության վարկածը՝ դրանով իսկ հակադրվելով տվյալ տարածքի բնակչության վերաբերյալ նոր ժամանակների աշխարհաքաղաքական այլ տեսությունների:

Չնայած ատենախոսության բարձր գիտական մակարդակին և կատարված աշխատանքի ծավալին, անհրաժեշտ է ներկայացնել մի շարք դիտողություններ,

որոնք, լինելով կառուցողական բնույթի, կնպաստեն հետագա ուսումնասիրությունների խորացմանը և չեն նվազեցնի աշխատանքի ընդհանուր դրական գնահատականը:

1. Ատենախոսության մեջ հաճախակի շեշտվում է բառի բնիկ ծագումը՝ հիմնվելով հնդեվրոպական արմատի հետ ունեցած կապի վրա (օրինակ՝ *Ածիկ*, *Աջրդ*): Սակայն նվազ ուշադրություն է դարձվում այն հարցին, թե բարբառային տվյալ ձևը պատմական ո՞ր շրջանում է հայտնվել կամ ամրագրվել տվյալ բարբառախմբում (օրինակ՝ գրաբարյան շրջանի սկզբում կամ դրանից առաջ, թե՞ միջին հայերենի փուլում): Անհրաժեշտ էր ավելի հստակեցնել յուրաքանչյուր բառի՝ նախագրաբարյան, գրաբարյան կամ հետագա շրջանից բարբառին անցնելու ժամանակագրական պատկերը:

2. Չնայած հեղինակը Ներածության մեջ հստակեցնում է տերմինների կիրառումը, բովանդակային մասում որոշ դեպքերում պահպանվում է ոչ կանոնարկված եզրույթների զուգահեռ օգտագործումը (օրինակ՝ *Մյունիք-Արցախի բարբառներ* և *Ղարաբաղ-Ճամախիի կամ ծայրիցուսիսարևելյան միջբարբառախումբ*): Ակադեմիական խստության տեսանկյունից ցանկալի էր հիմնվել դասակարգման մեկ՝ հեղինակի կողմից ընտրված, հստակ մոդելի վրա:

Հեղինակն ինքն էլ նշում է, որ ատենախոսության սահմանափակումների պատճառով միջինհայերենյան և աշխարհաբարյան շերտերը առանձին չեն քննվում: Սակայն այս բացը մասամբ նվազեցնում է փոխառյալ բառապաշարի ամբողջական պատկերը, քանի որ իրանական, թյուրքական և ռուսական ազդեցություններ բարբառախմբին են անցել հենց միջին հայերենի և աշխարհաբարի զարգացման փուլերում: Ատենախոսության բովանդակային առավելությունները, կարծում ենք, թույլ կտան հետագայում լրացնել այդ բացը:

3. Չնայած աշխատանքը հիմնականում կենտրոնանում է հնագույն շերտերի վրա, այն հատվածներում, որտեղ քննարկվում են իրանական և կովկասյան փոխառությունները (Գլուխ 2, 2.2), քիչ ուշադրություն է դարձվում նորագույն

թյուրքական և ռուսական փոխառությունների վրա, որոնք վերջին դարերում զգալիորեն փոխել են բարբառի բառապաշարը, հատկապես վերացական իմաստների ոլորտում: Այս թերությունը, սակայն, չի վերաբերում ատենախոսության հիմնական խնդրին՝ պատմական բառաշերտի վերլուծությանը:

4. Հեղինակը հաճախ հղում է կատարում սեփական հոդվածներին (Ներածության մեջ՝ ավելի քան 20 անգամ): Թեև սա ընդունելի է ատենախոսության մեջ՝ ցույց տալու համար թեմայի փորձարկումը, սակայն դրանց չափից ավելի առատությունը երբեմն ստեղծում է ինքնահղման տպավորություն՝ հիմնական տեքստի հաշվին:

5. Հեղինակը կասկածի տակ է դնում այս համատարած թյուրքաբանության (sağ) ծագումը և փորձում է այն կապել հ.ե. *kał- / *k'al- («առողջ, գեղեցիկ») արմատի հետ: Սա ևս չափազանց քիչ հավանական և ուժեղ «հայացման» փորձ է թվում:

6. Ատենախոսության մեջ նկատվել են մեկ-երկու վրիպակներ, օրինակ՝ պետք է վերանայել ֆրանսերեն տարբերակը. «Մալր բառի «ճահիճ, ցեխ, տիղմ» իմաստների դիմաց բարբառախումբը պահպանել է «մուր, կեղտ» ընդհանրական իմաստները (հմմտ. ֆր. **mulcère** «մուր»» (էջ 45), կամ՝ Buck հեղինակի անվան փոխարեն՝ Buke (էջ 20):

Այսպիսով՝ Մհեր Սուրենի Քումունցի «Արցախ - Սյունիքի բարբառային բառապաշարը» ատենախոսությունը հայ պատմական բարբառագիտության և համեմատական լեզվաբանության ոլորտում կատարված մեծածավալ, հիմնարար և բարձր գիտական արժեք ունեցող աշխատանք է: Հեղինակը հաջողությամբ կիրառել է պատմահամեմատական լեզվաբանության մեթոդները, իրականացրել է բառապաշարի համակարգային և ծագումնաբանական խորքային վերլուծություն՝ բացահայտելով Սյունիք-Արցախի բարբառների եզակի պահպանողական դերը հայերենի հնագույն շերտերի պահպանման գործում:

Ներկայացված աշխատանքը, իր կառուցվածքով, մեթոդաբանությամբ,

հիմնական գիտական դրույթների նորույթով և գործնական նշանակությամբ, լիովին բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ ատենախոսության հրապարակային պաշտպանությունից հետո Մհեր Սուրենի Քումունցին արժանի էմ համարում շնորհելու **Բանասիրական Գիտությունների Դոկտորի** գիտական աստիճան:

բան.գիտ.դոկտոր՝

Մերգո Հայրապետյան

ք. Գյումրի

15.11.2025

Բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ:

Շիրակի պետական համալսարանի գիտքարտուղար, կ.գ.թ., ղոցենա՝



Սարգիս Դետրոսյան

ք. Գյումրի

17. 11. 2025